

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան

20.02.2017թ.

ՀՀ կրթության պետական տեսչության 2017 թվականի աշխատանքային ծրագրի և ՀՀ կրթության պետական տեսչության պետի 2017 թվականի հունվարի 10-ի N 01-Ա կարգադրության համաձայն, 2017 թվականի հունվարի 23-ից մինչև փետրվարի 10-ը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի (այսուհետ՝ մարզպետարան) աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում (այսուհետ՝ վարչություն) կրթության բնագավառի օրենսդրության պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն ապահովելու նպատակով իրականացվել է ուսումնասիրություն հետևյալ կազմով՝ ՀՀ կրթության պետական տեսչության պետի տեղակալ Ռաիսա Գալստյան (խմբի ղեկավար), Արևելյան տարածքային բաժնի պետ Հռիփսիմե Խաչատրյան, Վերլուծության և գնահատման բաժնի պետի տեղակալ Գայանե Շահնազարյան, Հանրակրթության տեսչավորման բաժնի գլխավոր մասնագետ Արամ Խաչատրյան:

Ուսումնասիրությունն իրականացվել է ըստ ՀՀ կրթության պետական տեսչության պետի 2017 թվականի հունվարի 10-ի N 01-Ա կարգադրության հարցաշարի, որը նախապես ուղարկվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետին (այսուհետ՝ մարզպետ):

Ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատված է ընդունվել 2013 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2017 թվականի հունվարի 22-ը: Այն դպրոցների համար, որտեղ 2015 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ՀՀ կրթության պետական տեսչության կողմից իրականացվել են կրթական գործունեության ուսումնասիրություններ, ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատված է ընդունվել տվյալ դպրոցում իրականացված ուսումնասիրության օրվանից մինչև 2017թ. հունվարի 22-ը:

ՀՀ Գեղարքունիքի մարզում գործում է մարզային ենթակայության 118 հանրակրթական ուսումնական հաստատություն՝ 89 միջնակարգ, 26 հիմնական, 2 տարրական և 1 հատուկ դպրոց:

Ստորև ներկայացվում են ուսումնասիրության արդյունքներն ըստ հարցաշարի կետերի:

## 1. Վարչության կանոնադրության առկայությունը, հաստատումը, կանոնադրական պահանջների կատարումը

Վարչության կանոնադրությունը հաստատվել է մարզպետի՝ 2003 թվականի մայիսի 12-ի N 56 որոշմամբ (փոփոխվել է՝ 2012 թվականի մայիսի 31-ի N 114-Ա որոշմամբ) (տեղադրված է մարզի պաշտոնական կայքում՝ <http://gegharkunik.mtad.am/files/docs/3509.pdf>, բացակայում են 2-րդ և 4-րդ էջերը):

## 2. 2016 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի կատարողականը

Mulberry համակարգի միջոցով վարչության հանրակրթության բաժնի 2016 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի ուսումնասիրությունից պարզվել է, որ այն կատարվել է:

### **3. Դպրոցների կանոնադրությունների հաստատումը, փոփոխությունների կատարումը, լիցենզիաների առկայությունը, անվանակոչությունների հիմքերը**

Մարզպետարանի ենթակայությամբ գործող դպրոցների կանոնադրությունները հաստատվել և դրանցում համապատասխան փոփոխությունները կատարվել են սահմանված կարգով:

**Ակունքի միջնակարգ և Գեղաքարի հիմնական դպրոցները չունեն կրթական գործունեության թույլտվություն՝ լիցենզիա:**

Խախտվել է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ «Օրենքով նախատեսված կրթական ծրագրերը կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում»:

Դպրոցների անվանակոչության գործընթացն իրականացվել է սահմանված կարգով:

Մարզի 11 դպրոցներ գերազանցել են սովորողների՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամաններով հաստատված սահմանային տեղերի թիվը:

### **4. Կրթության կառավարման պետական լիազորված մարմնի, տարածքային կառավարման մարմնի ղեկավարի հրամանների, հրահանգների, հանձնարարականների, մեթոդական երաշխավորությունների կատարումը**

Կրթության կառավարման պետական լիազորված մարմնի, տարածքային կառավարման մարմնի ղեկավարի հրամանների, հրահանգների, հանձնարարականների, մեթոդական երաշխավորությունների կատարման ընտրանքային ուսումնասիրությունից պարզվել է՝

- մարզի դպրոցների կեսից ավելին չեն պահպանել օրինակելի ուսումնական պլանի պահանջները (դպրոցական բաղադրիչի բաշխում, սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության ապահովում, երաշխավորված առարկայական ծրագրերի առկայություն և այլն).
- դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորումն իրականացվել է խախտումներով.
- մանկավարժական կադրերի ընտրության և նշանակման գործընթացն իրականացվել է խախտումներով.
- խախտվել են դպրոցների տնօրենների և ուսուցիչների թափուր տեղերի համար հայտարարվող մրցույթների կարգերի տարբեր պահանջներ:

### **5. Կրթության բովանդակությանը համապատասխան կրթական գործընթացի կազմակերպումը, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարումը, տարեկան ուսումնական ժամանակացույցների, դասացուցակների պահպանումը**

Դպրոցների 2015-2016 և 2016-2017 ուսումնական տարիների ուսումնական պլանների և 2015-2016 ուսումնական տարվա առարկայական ծրագրերի կատարողականի (8-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններ՝ ըստ դասաժամերի թվի) ուսումնասիրությունից պարզվել է, որ մարզի **118** դպրոցներից **48**-ում (41 %) հայտնաբերվել են տարաբնույթ խախտումներ.

**Ծաղկաշենի միջնակարգ դպրոց** - «Էներգիայի և ռեսուրսների օգտագործում (7-րդ կամ 8-րդ դասարան)» առարկան դասավանդվել է 2016-2017 ուսումնական տարվա 6-րդ դասարանում:

**Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց** - «Էներգիայի և ռեսուրսների օգտագործում (7-րդ կամ 8-րդ դասարան)» առարկան դասավանդվել է 2016-2017 ուսումնական տարվա 9-րդ դասարանում:

**Գեղարքունիքի միջնակարգ դպրոց** - «Հայկական հարցի պատմություն (11-րդ դասարան, ծրագիրը կազմված է շաբաթական 1 ժամի համար)» առարկան երկու ուսումնական տարիներին էլ դասավանդվել է շաբաթական 2 ժամով:

**Վաղաշենի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարվա 11-րդ դասարանում «Առողջ ապրելակերպ» դասընթացը չի ուսումնասիրվել:

**Խաչաղբյուրի միջնակարգ դպրոց** - «Առողջ ապրելակերպ» դասընթացի գրանցումները կատարվել են ֆիզկուլտուրայի համար նախատեսված էջում:

**Ազատի հիմնական դպրոց** - «Առողջ ապրելակերպ» դասընթացի գրանցումների համար առանձին էջ չի հատկացվել:

**Ակունքի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարում «Երրորդ օտար լեզու» առարկան (Անգլերեն) 1 ժամով դասավանդվել է 7-8-րդ դասարաններում, 2016-2017 ուսումնական տարում՝ 6-9-րդ դասարաններում:

**Խաչաղբյուրի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարվա 9-րդ դասարանում, ըստ ուսումնական պլանի, 0,5 ժամ բաղադրիչը տրամադրվել է «Հանրահաշիվ» առարկային, սակայն այն չի ամրագրվել դասացուցակում, ուստի ուսուցիչը չի դասավանդել, և սովորողների շաբաթական բեռնվածությունը կազմել է 34 ժամ:

**Ազատի հիմնական դպրոց** - 2015-2016 ուսումնական տարվա 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 1 ժամը չի բաշխվել, և սովորողների շաբաթական բեռնվածությունը կազմել է 34 ժամ:

**Դրախտիկի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարում 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողների շաբաթական բեռնվածությունը կազմել է 31/32 ժամ (կապված Օտար լեզվի ընտրության հետ):

**Ծովազարդի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարում 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողների շաբաթական բեռնվածությունը կազմել է 25 ժամ:

**Գեղիովիտի թիվ 1 միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարվա 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողների շաբաթական բեռնվածությունը կազմել է 33 ժամ:

**Հայրավանքի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարում «Ֆիզիկա» առարկան չի դասավանդվել, սակայն 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում 3 ժամ հատկացվել է ֆիզիկային: «Ֆիզկուլտուրա» առարկան չի դասավանդվել, սակայն 12-րդ դասարանի 1-ին և երկրորդ կիսամյակներում դպրոցական բաղադրիչից 1,5 ժամ հատկացվել է ֆիզկուլտուրային: Սովորողների շաբաթական բեռնվածությունը կազմել է 28 ժամ:

**Ջիլի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարում չի դասավանդվել «Ինֆորմատիկա» և «Ֆիզիկա» առարկաները, սակայն 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում 1

ժամ տրամադրվել է Ինֆորմատիկային, 3 ժամ՝ Ֆիզիկային: Սովորողների շաբաթական բեռնվածությունը կազմել է 30 ժամ:

**Արփունքի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարում 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողների շաբաթական բեռնվածությունը կազմել է 25 ժամ:

**Շատջրեքի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարում 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողների շաբաթական բեռնվածությունը կազմել է 24/25 դասաժամ:

**Վանևանի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարում 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողների շաբաթական բեռնվածությունը կազմել է 23/25/26 ժամ:

**Արեգունի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարում 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողների շաբաթական բեռնվածությունը կազմել է 26/29 ժամ:

**Ախպրաձորի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարում 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողների շաբաթական բեռնվածությունը կազմել է 30/31 ժամ:

**Ակունքի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարում 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողների շաբաթական բեռնվածությունը կազմել է 28 ժամ:

**Գանձակի թիվ 2 միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարում 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողների շաբաթական բեռնվածությունը կազմել է 24/25/26 ժամ:

**Շատվանի միջնակարգ դպրոց** - 2016-2017 ուսումնական տարվա 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում յուրաքանչյուր սովորող ունեցել է շաբաթական 30/32/33 ժամ բեռնվածություն:

**Կալավանի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարվա 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում 1 ժամ հատկացվել է «Ինֆորմատիկա» առարկային:

**Գեղհովիտի թիվ 1 միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարվա 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում 2 ժամ հատկացվել է «Հասարակագիտություն», 1 ժամ՝ «Ինֆորմատիկա» առարկաներին:

**Ծովասարի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարվա 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում 1 ժամ հատկացվել է «Ինֆորմատիկա» առարկային:

**Զոլաքարի թիվ 2 միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարվա 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում 1 ժամ հատկացվել է «Ինֆորմատիկա» առարկային:

**Աստղաձորի միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարվա 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում 1 ժամ հատկացվել է «Ինֆորմատիկա» առարկային:

**Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարվա 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում 1 ժամ հատկացվել է «Ինֆորմատիկա» առարկային:

**Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց** - 2015-2016 ուսումնական տարում 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում 4 ժամ հատկացվել է «Ավտոգործ» առարկային:

**Ստորև ներկայացվող 19 դպրոցներում, ըստ դասամատյանների ուսումնասիրության, արձանագրվել են ուսումնական պլանով սահմանված որոշ առարկաների ժամաքանակի թերակատարում/գերակատարում.**

**Նորաշենի հիմնական դպրոց** - 8-րդ և 9-րդ դասարաններում «Ռուսաց լեզու» առարկայից առկա է 15 ժամ թերակատարում<sup>2</sup>:

**Ճամբարակի N 4 միջնակարգ դպրոց** - 8-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում «Ռուսաց լեզու» առարկայից առկա է համապատասխանաբար 8, 11, 6 ժամ թերակատարում<sup>2</sup>, իսկ «Ֆիզիկա» առարկայից՝ 15, 15 և 16 ժամ<sup>1</sup> (դասավանդվել է 2015 թվականի նոյեմբերի 18-ից սկսած):

**Գետիկի միջնակարգ դպրոց** - 9-րդ և 11-րդ դասարաններում «Ֆիզկուլտուրա» առարկայից առկա է համապատասխանաբար 12 և 17 ժամ թերակատարում<sup>1</sup> (դասավանդվել է 2015 թվականի հոկտեմբերի 6-ից սկսած):

**Վահանի միջնակարգ դպրոց** - 8-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում «Ֆիզկուլտուրա» առարկայից առկա է համապատասխանաբար 17, 17 և 20 ժամ թերակատարում<sup>1</sup> (դասավանդվել է 2015 թվականի հոկտեմբերի 10-ից սկսած):

**Դրախտիկի միջնակարգ դպրոց** - 8-րդ դասարանում «Աշխարհագրություն» առարկայից առկա է 7, իսկ «Երկրաչափություն» առարկայից՝ 4 ժամ թերակատարում<sup>2</sup>:

**Այգուտի միջնակարգ դպրոց** - 8-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում «ՆՁՊ» առարկայից առկա է համապատասխանաբար 5, 4 և 4 ժամ թերակատարում<sup>1</sup> (դասավանդվել է 2015 թվականի հոկտեմբերի 1-ից սկսած):

**Հայրավանքի միջնակարգ դպրոց** - 8-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում «Ֆիզկուլտուրա» առարկայից առկա է համապատասխանաբար 48, 46 և 47 ժամ թերակատարում<sup>1</sup> (դասավանդվել է 2016 թվականի փետրվարի 22-ից սկսած):

**Լճափի միջնակարգ դպրոց** - 8-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում «Կենսաբանություն» առարկայից առկա է 9 ժամ թերակատարում<sup>2</sup>:

**Արտանիշի միջնակարգ դպրոց** - 8-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում «Կենսաբանություն» առարկայից առկա է համապատասխանաբար 13, 15 և 14 ժամ թերակատարում<sup>2</sup>, իսկ «Քիմիա» առարկայից՝ 14-ական ժամ<sup>2</sup>:

**Տրետուքի միջնակարգ դպրոց** - 8-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում «Քիմիա» առարկայից առկա է համապատասխանաբար 10, 11 և 10 ժամ թերակատարում<sup>2</sup>:

**Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոց** - 8-րդ և 9-րդ դասարաններում «Ռուսաց լեզու» առարկայից համապատասխանաբար առկա է 6 և 10 ժամ թերակատարում<sup>2</sup>, իսկ «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաներից՝ 8-ական ժամ գերակատարում:

**Փոքր Մասրիկի միջնակարգ դպրոց** - 8-րդ դասարանում «Հայոց լեզու» առարկայից առկա է 4 ժամ թերակատարում<sup>2</sup>, «Գրականություն» առարկայից՝ 5 ժամ<sup>2</sup>, «Աշխարհագրություն» առարկայից՝ 4 ժամ, իսկ 9-րդ դասարանում՝ «Հայաստանի աշխարհագրություն» առարկայից՝ 4 ժամ թերակատարում<sup>2</sup>:

**Ծափաթաղի միջնակարգ դպրոց** - 8-րդ և 9-րդ դասարաններում «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաներից առկա է 7-ական ժամ թերակատարում<sup>2</sup>, իսկ 11-րդ դասարանում «Հայոց լեզու» առարկայից՝ 10 ժամ գերակատարում, «Հայ գրականություն» առարկայից՝ 20 ժամ թերակատարում<sup>2</sup>:

**Խաչաղբյուրի միջնակարգ դպրոց** - 11-րդ դասարանում «Հայոց պատմություն» առարկայից առկա է 5 ժամ թերակատարում, «Համաշխարհային պատմություն» առարկայից՝ 13 ժամ գերակատարում:

**Շատվանի միջնակարգ դպրոց** - 8-րդ դասարանում «Գրականություն» առարկայից առկա է 7 ժամ թերակատարում:

**Կուտականի միջնակարգ դպրոց** - 8-րդ դասարանում «Հայոց լեզու» առարկայից առկա է 33 ժամ գերակատարում, իսկ 9-րդ դասարանում՝ «Գրականություն» առարկայից՝ 13 ժամ թերակատարում:

**Ծովակի միջնակարգ դպրոց** - 8-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում «Ինֆորմատիկա» առարկայից առկա է համապատասխանաբար 12-ական ժամ թերակատարում<sup>2</sup>:

**Կարճաղբյուրի միջնակարգ դպրոց** - 11-րդ դասարանում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայից առկա է 6 ժամ թերակատարում<sup>2</sup>:

**Ախարաձորի միջնակարգ դպրոց** - 8-րդ և 11-րդ դասարաններում «Անգլերեն» առարկայից առկա է 33-ական ժամ թերակատարում<sup>1</sup>: Ուսուցիչն ընդունվել է երկրորդ կիսամյակից:

**Ծանոթություն. թերակատարումը պայմանավորված է.**

**«1»՝ մասնագետ չլինելու հանգամանքով,**

**«2»՝ ուսուցչի հիվանդությամբ (ըստ անաշխատունակության թերթիկի):**

Ստորև ներկայացվող 16 դպրոցներում, ըստ տնօրենների կողմից ներկայացված տեղեկատվության, համապատասխան որակավորմամբ ուսուցիչ չլինելու պատճառով չի դասավանդվում թվով 13 առարկա.

**Վահանի միջնակարգ դպրոց** - «Տեխնոլոգիա» (տղաներ),

**Դրախտիկի միջնակարգ դպրոց** - «Տեխնոլոգիա» (տղաներ),

**Կալավանի միջնակարգ դպրոց** - «Օտար լեզու», «Քիմիա»,

**Շորժայի միջնակարգ դպրոց** - «Աշխարհագրություն»,

**Աղբերքի միջնակարգ դպրոց** - «Տեխնոլոգիա» (5-7-րդ դասարաններ),

**Անտառամեջի միջնակարգ դպրոց** - «Ֆիզիկա», «Բնագիտություն»: 2016-2017 ուսումնական տարում՝ «Ինֆորմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն»,

**Երանոսի թիվ 1 միջնակարգ դպրոց** - «Քիմիա», «Ֆիզիկա» (2016-2017 ուսումնական տարվա հոկտեմբեր ամսից),

**Փամբակ-Դարանակի միջնակարգ դպրոց** - «Ֆիզիկա»,

**Ծովասարի միջնակարգ դպրոց** - «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հասարակագիտություն» (2015-2016 ուսումնական տարվա 9-րդ և 11-րդ դասարաններում 1-ին կիսամյակ),

**Ծափաթաղի միջնակարգ դպրոց** - «Քիմիա», «Կենսաբանություն» (2015-2016, 2016-2017 ուսումնական տարիներին),

**Գեղաքարի հիմնական դպրոց** - 2015-2016 ուսումնական տարում «Անգլերեն», (2016-2017 ուսումնական տարվա նոյեմբերից ընդունվել է նոր մասնագետ),

**Մաքենիսի միջնակարգ դպրոց** - «Օտար լեզու»,

**Վանևանի միջնակարգ դպրոց** - «Գերմաներեն»,

**Ծովակի միջնակարգ դպրոց** - «Ինֆորմատիկա» (2016-2017 ուսումնական տարի).

**Գանձակի թիվ 2 միջնակարգ դպրոց** - «Ֆիզկուլտուրա» (2015-2016 ուսումնական տարում 8-րդ և 11-րդ դասարաններում).

**Սարուխանի թիվ 3 միջնակարգ դպրոց** - «Ֆրանսերեն» (2015-2016 ուսումնական տարվա 8-րդ դասարան: 2016-2017 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից՝ բոլոր դասարաններում):

Ստորև բերված աղյուսակում նշված են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները և դրանք խախտած դպրոցները.

ՀՀ օրենսդրության պահանջը	Խախտում թույլ տված դպրոցը
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2015 թվականի մայիսի 4-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 369-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ի 20-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ.</b></p> <p>Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու (բացի ռուսերենից և մյուս հիմնական օտար լեզվից) կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ 5-9-րդ դասարաններում (շաբաթական 1.5 կամ 2 ժամ) և 10-12-րդ դասարաններում (շաբաթական 2 ժամ) Նախարարության կողմից հաստատված չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:</p>	<p><b>Ակունքի մ/դ</b></p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2016 թվականի հունիսի 27-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2016-2017 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 670-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ի 21-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ.</b></p> <p>Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու (բացի ռուսերենից և մյուս հիմնական օտար լեզվից) կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ 5-9-րդ դասարաններում (շաբաթական 1.5 կամ 2 ժամ) և 10-12-րդ դասարաններում (շաբաթական 2 ժամ) Նախարարության կողմից հաստատված չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:</p>	<p><b>Ակունքի մ/դ</b></p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2015 թվականի մայիսի 4-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 369-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ի 18-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջ.</b></p> <p>Հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարվում է մանկավարժական <u>խորհրդի որոշմամբ՝</u> <u>ելնելով հաստատության, դասարանի պատրաստությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաև Նախարարության հանձնարարականներից</u></p>	<p><b>Հայրավանքի մ/դ</b> <b>Ջիլի մ/դ</b></p>

<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2015 թվականի մայիսի 4-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 369-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ի 19-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ.</b></p> <p>12-րդ դասարանում Ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակը երկրորդ կիսամյակում հատկացվում է խմբային պարապմունքների միջոցով պետական քննական (ավարտական, միասնական) առարկաների ուսումնական ամբողջ նյութի կրկնությանը: Այդ նպատակով կազմվում է սովորողների խմբային ուսուցման ժամանակացույց:</p>	<p>Կալավանի մ/դ Գեղհովիտի թիվ 1 մ/դ Ծովասարի մ/դ Զոլաքարի թիվ 2 մ/դ Աստղաձորի մ/դ Նորատուսի թիվ 1 մ/դ Կարմիրգյուղի թիվ 2 մ/դ Զիլի մ/դ</p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2015 թվականի մայիսի 4-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 369-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ի 19-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջ.</b></p> <p>12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում յուրաքանչյուր դասարանի (խմբի) համար ուսուցումն իրականացվում է խմբային եղանակով՝ յուրաքանչյուր սովորողի համար շաբաթական 34 ժամ ծավալով:</p>	<p>Դրախտիկի մ/դ, Ծովազարդի մ/դ, Գեղհովիտի թիվ 1 մ/դ, Հայրավանքի մ/դ, Զիլի մ/դ, Արփուների մ/դ, Շատչրեքի մ/դ, Վանևանի մ/դ, Ակունքի մ/դ, Արեգունիի մ/դ, Ախպրաձորի մ/դ, Գանձակի թիվ 2 մ/դ</p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2015 թվականի մայիսի 4-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 369-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ի 26-րդ կետի պահանջ.</b></p> <p>8-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ:</p>	<p>Վաղաշենի մ/դ</p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2015 թվականի մայիսի 4-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 369-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ի 26-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջ.</b></p> <p>«Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:</p>	<p>Ազատի հ/դ Խաչաղբյուրի մ/դ</p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2016 թվականի հունիսի 27-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2016-2017 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 670-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ի 19-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ.</b></p> <p>Նշված առարկաների ուսուցումը այլ դասարաններում Հաստատության կողմից կարող է իրականացվել դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո:</p>	<p>Ծաղկաշենի մ/դ Կարմիրգյուղի թիվ 2 մ/դ</p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2016 թվականի հունիսի 27-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2016-2017 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 670-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ի 20-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջ.</b></p> <p>12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի շաբաթական</p>	<p>Շատվանի մ/դ</p>



<p>ուսումնական բեռնվածությունը ձևավորվում է պարտադիր ուսումնասիրության «Նախնական գինվորական պատրաստություն» (ՆՁՊ) (1 ժամ) առարկայի և սովորողի ընտրությամբ առնվազն երեք առարկայի ուսումնառության համար հատկացված ժամաքանակից՝ ընդհանուր առմամբ կազմելով 31 դասաժամ:</p>	
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2015 թվականի մայիսի 4-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 369-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ով սահմանված շաբաթական և (կամ) տարեկան (կիսամյակային) ծանրաբեռնվածություն:</b></p>	<p>Ազատի հ/դ Խաչադբյուրի հ/դ</p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2015 թվականի մայիսի 4-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 369-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ի 18-րդ կետի 5-6-րդ ենթակետերի պահանջներ.</b></p> <p>Դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը պարտադիր է: Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկը ամրագրվում է Հաստատության ուսումնական պլանում և դասացուցակում:</p>	<p>Ազատի հ/դ Խաչադբյուրի հ/դ</p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամաններով հաստատված առարկայական ծրագրերով սահմանված ժամաքանակի խախտում</b></p>	<p>Գեղարքունիքի մ/դ</p>

**6. 2012-2015 թվականներին դպրոցում աշխատանքի ընդունված մանկավարժական աշխատողների (այդ թվում՝ ՆՁՊ) մասնագիտական որակավորման համապատասխանությունը, ուսուցչի թափուր տեղի մրցույթի կազմակերպումն ու անցկացումը**

Մարզի **118** դպրոցներից խախտում չի հայտնաբերվել **64**-ում (**54%**) (*տեղեկատվությունը ներկայացված է հավելվածի «Մանկավարժներ» բաժնում*):

**Մարզի 54 դպրոցներում (46%)** հայտնաբերվել է ընդհանուր թվով **102** խախտում, որից՝

**1)** վարչական աշխատողների (տնօրեն, փոխտնօրեն) ուսումնական ծանրաբեռնվածության գերազանցում՝ **1 դպրոց (1 վարչական աշխատող)**,

**2)** ուսուցչի՝ համապատասխան որակավորում կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ ունենալու պահանջի խախտում (այդ թվում՝ ժամանակավոր փոխարինումները, ժամանակավոր՝ մինչև մրցույթի կայանալը, ինչպես նաև մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվածները)՝ **34 դպրոց (60 ուսուցիչ՝ այդ թվում՝ ԿԳՆ-ից գործուղված 2 ուսուցիչ):**

**3)** մանկավարժական աշխատողների (բացառությամբ՝ ուսուցիչների) պաշտոնների անվանացանկով սահմանված որակավորման պահանջների խախտում՝ **18 դպրոց (22 մանկավարժական աշխատող)**,

**4)** ուսուցչի թափուր տեղի համալրում ոչ մրցութային հիմունքներով՝ **7 դպրոց (8 ուսուցիչ, այդ թվում՝ ԿԳՆ-ից գործուղված 2 ուսուցիչ):**

**5)** ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի պահանջների խախտում՝ **35 դպրոց՝ (50 խախտում.** հայտարարության ժամկետ, թափուր տեղը մինչև մրցույթ համալրվել է ոչ մասնագետով, մրցույթում հաղթող է ճանաչվել ուսուցչի պաշտոնին չհամապատասխանող անձ):

Ստորև բերված աղյուսակում նշված են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները և դրանք խախտած դպրոցները.

<b>«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք</b>	
<p><b>24-րդ հոդվածի 3-րդ մաս.</b> «Պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվում է մրցութային հիմունքներով՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մրցութի օրինակելի կարգի և ուսումնական հաստատության կանոնադրության, բացառությամբ նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած թեկնածուի առկայության կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատություններ համապատասխան մասնագետ գործուղվելու դեպքում, եթե մինչ այդ առնվազն 2 անգամ հայտարարված մրցութի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը չի համալրվել»:</p>	<p><b>Արփունքի մ/դ (1)</b>  <b>Գեղամասարի մ/դ (1)</b> ԿԳՆ-ից գործուղված  <b>Վահանի մ/դ (1)</b> ԿԳՆ-ից գործուղված,  <b>Ավազանի հ/դ (1),</b>  <b>Վարդենիկի N 1 հ/դ (2),</b>  <b>Խաչաղբյուրի մ/դ (1),</b>  <b>Փամբակ-Դարանակի մ/դ (1,</b> նախկին տնօրենի պաշտոնավարման ընթացքում)</p>
<p><b>25-րդ հոդվածի 4-րդ մաս.</b> «Պետական ուսումնական հաստատության <b>մեկ դրույքով</b> պաշտոնավարող վարչական աշխատողը համապատասխան որակավորման դեպքում համատեղության կարգով կարող է ունենալ շաբաթական մինչև <b>ութ դասաժամ</b> ուսումնական ծանրաբեռնվածություն: <b>Կես դրույքով</b> պաշտոնավարող և համապատասխան որակավորում ունեցող պետական ուսումնական հաստատության վարչական աշխատողը համատեղության կարգով կարող է ունենալ շաբաթական մինչև <b>տասնչորս դասաժամ</b> ուսումնական ծանրաբեռնվածություն»:</p>	<p><b>Արտանիշի մ/դ (1)</b></p>
<p><b>26-րդ հոդվածի 1-ին մաս.</b> «Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ»:</p>	<p><b>Այգուտի մ/դ (5), Արեգունու մ/դ (1),</b>  <b>Արտանիշի մ/դ (1), Գագարինի մ/դ (2),</b>  <b>Գեղամասարի մ/դ (1)</b> ԿԳՆ-ից գործուղված, <b>Գեղամավանի մ/դ (2),</b>  <b>Զոլաքարի հ.1 մ/դ (1), Լճափի մ/դ (6),</b>  <b>Լուսակունքի մ/դ (1), Ծակքարի մ/դ (1),</b>  <b>Ծափաթաղի մ/դ (1), Մադինայի մ/դ (2),</b>  <b>Մաքենիսի մ/դ (4), Նորակերտի մ/դ (1),</b>  <b>Նորատուսի հ.1 մ/դ (1), Սարուխանի հ.1 մ/դ (1),</b>  <b>Սարուխանի հ.3 մ/դ (1), Սևանի հ.5 մ/դ (1),</b>  <b>Վահանի մ/դ (1)</b> ԿԳՆ-ից գործուղված, <b>Վարսերի մ/դ (1), Աղբերքի մ/դ (1),</b>  <b>Ավազանի հ/դ (2), Գանձակի N 2 մ/դ (2),</b>  <b>Գավառի N 5 հ/դ (1), Զովաբերի մ/դ (2),</b>  <b>Ծովազարդի մ/դ (3), Վարդենիկի N 1 հ/դ (3),</b>  <b>Նորատուսի N 3 մ/դ (2), Ազատի հ/դ (1),</b>  <b>Խաչաղբյուրի մ/դ, Ծաղկաշենի մ/դ (2), Կուտականի մ/դ (4),</b></p>

	<p>Մ. Մասրիկի տ/դ (1), Փամբակ-Դարանակի մ/դ (1, նախկին փնօրենի պաշտոնավարման ընթացքում)</p>
<p align="center"><b>ՀՀ կառավարության 14.10.2010 թ. N 1391-Ն որոշմամբ հաստատված՝ «ՀՀ ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկ և նկարագրեր»</b></p>	
<p><b>6-րդ բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «...դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ»)</p>	<p>Գագարինի մ/դ, Լճափի մ/դ</p>
<p><b>12-րդ բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «... <b>գրադարանավարի</b> պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ»:</p>	<p>Լճափի մ/դ (3), Լուսակունքի մ/դ (2), Կախակնի մ/դ (1), Շատջրեքի մ/դ (1), Սոթքի մ/դ (2), Տրետուքի մ/դ (1), Լանջաղբյուրի մ/դ (1), Ջովաբերի մ/դ (1), Դրախտիկի մ/դ (1), Դոմաշենի մ/դ (1), Ջաղացաձորի մ/դ (1), Վարդենիկի N 1 հ/դ (1), Անտառամեջի մ/դ (1), Կուտականի մ/դ (1), Մ. Մասրիկի տ/դ (1), Փամբակ-Դարանակի մ/դ (1, նախկին փնօրենի պաշտոնավարման ընթացքում)</p>
<p align="center"><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 15.04.2013թ. N 396-Ն հրամանով հաստատված (30.07.2013թ. N 1001-Ն հր. լրաց., 28.12.2015թ N 1070-Ն հր. լրաց.) «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցացվող մրցույթի օրինակելի կարգ»</b></p>	
<p><b>15.04.2013թ. N 396-Ն 4-րդ կետ, 30.07.2013թ. N 1001-Ն 5-րդ կետ, 28.12.2015թ N 1070-Ն 5-րդ կետ.</b> «Մրցույթը հայտարարվում է Թափուր տեղ առաջանալու օրվանից՝ 7-օրյա ժամկետում: Անկախ պատճառներից մրցույթը չկայանալու դեպքում Թափուր տեղը լրացնելու համար պարբերաբար հայտարարվում է մրցույթ՝ մինչև հաղթող ճանաչվելը՝ պահպանելով սույն կարգի պահանջները»:</p>	<p>Արեգունու մ/դ, Գավառի հ. 3 հ/դ, Գեղիովիտի հ.1 մ/դ, Ծովասարի մ/դ, Խաչաղբյուրի մ/դ</p>
<p><b>15.04.2013թ. N 396-Ն 5-րդ կետ, 30.07.2013թ. N 1001-Ն 6-րդ կետ, 28.12.2015թ N 1070-Ն 6-րդ կետ.</b> «Թափուր տեղ առաջանալու օրվանից մինչև մրցույթը կայանալու, Թափուր տեղը մրցութային կարգով չհամալրվելու կամ մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում (անկախ պատճառներից), որոշակի ժամկետով պայմանագրով աշխատանքի կարող են ընդունվել համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձինք, իսկ լեռնային, բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրերի Հաստատություններում՝ նաև ուսուցչի որակավորում չնորհող բուհերի հեռակա ուսուցմամբ ավարտական կուրսերի համապատասխան մասնագիտությամբ սովորող ուսանողները»:</p>	<p>Այգուտի մ/դ (3), Արեգունու մ/դ (1), Արտանիշի մ/դ (1), Արփունքի մ/դ (1), Գագարինի մ/դ (1), Գավառի հ.3 հ/դ (1), Գեղամավանի մ/դ (2), Լճափի մ/դ (3), Ծակքարի մ/դ (1), Կութի մ/դ (1), Հայրավանքի մ/դ (2), Մադինայի մ/դ (1), Մաքենիսի մ/դ (3), Նորակերտի մ/դ (1), Նորատուսի հ.1 մ/դ (1), Սարուխանի հ.3 մ/դ (1), Սևանի հ. 5 մ/դ (1), Վահանի մ/դ (1), Աղբերքի մ/դ (1), Արծվանիստի մ/դ, (1), Գանձակի N 2 մ/դ (2), Գավառի N 5 հ/դ (1),</p>

<p><b>30.07.2013թ. N 1001-Ն 15-րդ կետ, 28.12.2015թ N 1070-Ն 15-րդ կետ.</b>          «Մրցույթին կարող է մասնակցել Հաստատության տվյալ Թափուր տեղին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը»:</p>	<p><b>Այգուտի մ/դ (1), Գագարինի մ/դ (1), Գեղամավանի մ/դ (2), Լճափի մ/դ (3), Ծափաթաղ մ/դ (1), Մադինայի մ/դ (1), Նորատուսի հ.1 մ/դ (1), Սարուխանի հ.3 մ/դ (1)</b></p>
--	---

**7. Դպրոցի տնօրենի ընտրության (նշանակման) կարգի պահանջների կատարումը**

Ուսումնասիրությամբ ընդգրկված ժամանակահատվածում **մարզի 24 դպրոցների տնօրենների թափուր տեղերի մրցույթները չեն հայտարարվել (առ 23.01.2017թ.):** Մարզպետի համապատասխան որոշումներով նշանակվել են տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարներ:

**Չի ապահովվել ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 2-րդ կետի 2-րդ ենթակետի («... տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում՝ ... հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, երեք աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է որոշում տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին») պահանջի կատարումը:**

**8. Դպրոցի կառավարման խորհրդի և տնօրենի՝ ՀՀ օրենսդրության և դպրոցի կանոնադրության պահանջներին հակասող որոշումները, հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները կասեցնելը կամ ուժը կորցրած ճանաչելը**

Մարզպետի համապատասխան որոշումով Ծովասարի միջնակարգ դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի՝ ուսուցիչ ընդունելու վերաբերյալ 08.09.2016թ. հ.22-Ա հրամանը ճանաչվել է անվավեր, քանի որ 05.09.2016թ. թափուր տեղի համար կայացած մրցույթում առկա են եղել ընթացակարգային խախտումներ:

**9. Դպրոցներում խորհրդի անդամների առաջադրումը, դպրոցի մանկավարժական, ծնողական խորհուրդների որոշումների հիման վրա խորհրդի անվանական կազմի հաստատումը կամ կարգի պահանջների խախտման դեպքում՝ խորհրդի անվանական կազմում առաջադրված անձի կամ անձանց թեկնածությունը մերժելը, առաջադրված խորհրդի անդամների լիազորությունները մարզպետի կողմից վաղաժամկետ դադարեցնելը**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ»-ում ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015թ. նոյեմբերի 12-ի N 956-Ն հրամանով կատարված լրացումները (ուժի մեջ է մտել 2015թ. դեկտեմբերի 25-ին)՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2016թ. փետրվարի 11-ի

շրջաբերական գրությամբ համայնքների ղեկավարներին հանձնարարվել է հնգօրյա ժամկետում կատարել հանրակրթական դպրոցների խորհուրդների անվանական կազմերի փոփոխություն:

Խորհուրդների կազմերի փոփոխությունների վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից ուղարկված գրությունները ստացվել են 2016թ. փետրվարի 16-ից մինչև 25-ն ընկած ժամանակահատվածում:

Հիմք ընդունելով հանրակրթական դպրոցների մանկավարժական և ծնողական խորհուրդների որոշումները՝ մարզպետի համապատասխան որոշումներով 2016թ. հունվարի 25-ից մինչև 29-ն ընկած ժամանակահատվածում հաստատվել են դպրոցների խորհուրդների անվանական կազմերը:

Դպրոցների կոլեգիալ կառավարման մարմիններում ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված ներկայացուցիչների անվանացանկը ՀՀ Գեղարքունիքի մարզպետին ուղարկվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016թ. փետրվարի 18-ի գրությամբ:

Մարզպետի որոշմամբ ՀՀ կրթության և գիտության նախարարի ներկայացուցիչների անվանացանկը հաստատվել է 2016թ. փետրվարի 25-ից մինչև մարտի 13-ն ընկած ժամանակահատվածում:

**Չի պահպանվել ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2010թ. մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ»-ի N 113-Ն հրամանով հաստատված կարգի (ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015թ. նոյեմբերի 12-ի N 956-Ն հրամանով կատարված լրացումներով) 1-ին կետով («1. Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ Հաստատություն) հիմնվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, մարզպետը և Երևանի քաղաքապետը (այսուհետ՝ լիազորված մարմին) հաստատության հիմնադրման կամ խորհրդի ձևավորման կարգի փոփոխման դեպքերում 30-օրյա ժամկետում, սույն կարգի համաձայն, ըստ ենթակայության՝ կազմակերպում և ապահովում են Հաստատություն կոլեգիալ կառավարման մարմնի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամների ընտրության գործընթացը») սահմանված ժամկետը:**

**Ակունքի, Դրախտիկի, Ծովասարի, Ջաղացաձորի, Ջիլի միջնակարգ, Գեղաքարի և Մարտունու N 2 հիմնական դպրոցների ծնողական խորհուրդների ներկայացուցիչները տվյալ դպրոցի մանկավարժական աշխատողներ են:**

Խախտվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2010թ. մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ»-ի N 113-Ն հրամանով հաստատված կարգի (ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015թ. նոյեմբերի 12-ի N 956-Ն հրամանով կատարված լրացումներով) 11.1-ին կետի («11.1 Հաստատության խորհրդի կազմում ՀՀ կրթության և գիտության նախարարության, լիազորված մարմնի և ծնողական խորհրդի կողմից չի կարող առաջադրվել տվյալ ուսումնական հաստատությունում սովորողի այն ծնողը, ով միաժամանակ հանդիսանում է տվյալ հաստատության մանկավարժ») պահանջը:

## **10. ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրեր գործուղված մանկավարժների առկայությունը, նրանց բնակության և փոխադրման խնդիրները**

**Գեղամասարի և Վահանի միջնակարգ դպրոցներ** գործուղված և 2 տարի ժամկետով (2016-2018թ.թ.) որպես ուսուցիչ նշանակված անձինք չունեն մասնագիտական որակավորում:

Դպրոցների տնօրենները հիմք են ընդունել ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 01.09.2016թ. «Հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատելու նպատակով Հայաստանի Հանրապետության մարզեր գործուղել ներքոհիշյալ մանկավարժ աշխատողներին (համաձայն հավելվածի)» N 636-Ա հրամանը:

Մինչ այդ վերոնշյալ դպրոցներում հայտարարվել է ուսուցչի թափուր տեղի 2-3 մրցույթ, սակայն դիմորդ չի եղել:

*Տեղեկատվությունը ներկայացված է հավելվածի «Մանկավարժներ» բաժնում:*

## **11. Քաղաքացիների (մանկավարժների) նպատակային ընդունելությունը, նպատակային ընդունելության համապատասխանությունը դպրոցի պահանջներին**

Քաղաքացիների, մանկավարժների՝ ՀՀ պետական մանկավարժական բուհերի նպատակային տեղերում ընդունելության վերաբերյալ դպրոցների տնօրենների ներկայացրած տեղեկատվության համաձայն, սահմանված կարգով, **Հայրավանքի և Սարուխանի հ. 1 միջնակարգ դպրոցներ**, որպես ուսուցիչ, նշանակվել են նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած 2 անձ:

Ըստ պայմանագրերի՝ նշանակված ուսուցիչները պետք է աշխատեին 3 տարի, սակայն Հայրավանքի միջնակարգ դպրոցի ուսուցիչը աշխատել է 31.08.2013թ.-ից 07.11.2014թ. (մոտ՝ 1տ. 2 ամիս), իսկ Սարուխանի հ. 1 միջնակարգ դպրոցի ուսուցիչը՝ 01.09.2014թ.-ից 01.09.2015թ (1 տարի):

**Հայրավանքի միջնակարգ դպրոցի ուսուցիչը աշխատանքից ազատվելու վերաբերյալ իր դիմումում նշել է, որ պարտավորվում է ժամանակին փոխհատուցել պետական բյուջեից իր վրա դրված ծախսերը:**

## **12. Սովորողների՝ էքստենոն կարգով ներկայացված փոխադրական քննությունների հիմքերը, քննություններին մասնակցելու թույլտվությունը, էքստենոն կարգով քննություններին մասնակցողների վերաբերյալ մանկխորհրդի որոշման և դպրոցի տնօրենի կից գրության առկայությունը**

Ուսումնասիրությամբ ընդգրկված ժամանակահատվածում մարզի դպրոցներում էքստենոն քննություններ չեն անցկացվել:

## **13. Մեղալի հավակնորդ շրջանավարտներին վերաբերող տվյալների հավաստիությունը**

Ուսումնասիրությամբ ընդգրկված ժամանակահատվածում մարզի դպրոցներում մեդալի հավակնորդներ չեն եղել:

**14. Մարզային, հանրապետական և միջազգային օլիմպիադաներին մասնակցության կազմակերպումը. ոլորտը, մասնակիցների թիվը, դպրոցին, ուսուցչին, մասնակցին խրախուսելը**

2013–2014, 2014–2015, 2015–2016 ուսումնական տարիներին մարզում դպրոցականների առարկայական օլիմպիադայի տարածքային և մարզային փուլերը կազմակերպվել և անցկացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամանների համաձայն:

Առկա են վերջին 3 ուսումնական տարիների առարկայական օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերի առարկայական հանձնաժողովների արձանագրությունները, եզրակացությունները և հաղթող սովորողների վերաբերյալ հայտերը՝ հանրապետական փուլին մասնակցելու համար:

Ստորև ներկայացվում են առարկայական օլիմպիադաներին մասնակցած սովորողների վերաբերյալ տեղեկություններ.

Առարկան	2013-2014 (մասնակիցների թիվը՝ 79)	2014-2015 (մասնակիցների թիվը՝ 75)	2015-2016 (մասնակիցների թիվը՝ 72)
<b>Կենսաբանություն</b>	1 (գովասանագիր)	3 (գովասանագիր) 1 (3-րդ կարգ)	1 (գովասանագիր)
<b>Հայոց լեզու</b>	1 (2-րդ կարգ)	1 (գովասանագիր)	1 (գովասանագիր)
<b>Հայ գրականություն</b>	3 (3-րդ կարգ) 1 (գովասանագիր)	1 (գովասանագիր)	1 (գովասանագիր) 1 (2-րդ կարգ)
<b>Մաթեմատիկա</b>	1 (գովասանագիր)	0	0
<b>Քիմիա</b>	1 (գովասանագիր)	0	1 (2-րդ կարգ)
<b>Աշխարհագրություն</b>	1 (3-րդ կարգ) 1 (գովասանագիր)	1 (3-րդ կարգ)	1 (գովասանագիր) 1 (2-րդ կարգ)
<b>Պատմություն</b>	3 (գովասանագիր)	0	2 (գովասանագիր)
<b>Ռուսաց լեզու</b>	2 (3-րդ կարգ) 1 (գովասանագիր)	1 (գովասանագիր)	1 (գովասանագիր)
<b>Գերմաներեն</b>	1 (1-ին կարգ) 1 (2-րդ կարգ) 3 (գովասանագիր)	3 (3-րդ կարգ)	1 (1-ին կարգ) 1 (գովասանագիր)
<b>ՀԵՊ</b>	1 (3-րդ կարգ) 1 (գովասանագիր)	0	1 (2-րդ կարգ)
<b>ՆՁՊ</b>	1 (գովասանագիր)	0	2-րդ տեղ
<b>Ֆրանսերեն</b>	1 (գովասանագիր)	1 (գովասանագիր)	1 (գովասանագիր)

Առարկայական օլիմպիադաների մարզային և հանրապետական փուլերում հաղթող ճանաչված սովորողները և նրանց ներկայացնող դպրոցները մարզպետի կողմից պարգևատրվել են պատվոգրերով և գովասանագրերով:

Ուսումնական տարին	Տարածքային փուլ (մասնակից)	Մարզային փուլ (մասնակից)	Հանրապետական փուլ (մասնակից)
2013-2014	2892	358	79
2014-2015	2605	328	75
2015-2016	2741	432	72

## 15. Ավարտական պետական փաստաթղթերի ստացման, պահպանության և բաշխման, ամփոփաթեթերի, տարիֆիկացիոն ցուցակների առկայությունը

Ավարտական պետական փաստաթղթերը՝ ակտերը, ամփոփաթեթերը, հաշվետվությունները (հիմնական կրթության վկայականների և միջնակարգ կրթության ատեստատների), ուսումնական հաստատությունների դրույքային վարձաչափերի (տարիֆիկացիոն) մատյաններն առկա են:

## 16. ՀՀ կրթության պետական տեսչության կողմից իրականացված տեսչավորման, ուսումնասիրությունների արդյունքում պետական լիազորված մարմնի պարտականություններից բխող անհրաժեշտ աշխատանքների կատարումը, ուսումնական հաստատություններին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողությունը, հաշվետվությունների քննարկումը

Ուսումնասիրությամբ ընդգրկված ժամանակահատվածում ՀՀ կրթության պետական տեսչության կողմից 2015 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին իրականացվել են ուսումնասիրություններ մարզի հանրակրթական ծրագրեր իրականացնող թվով 44 ուսումնական հաստատություններում:

Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով 15 դպրոցների տնօրեններին և (կամ) կառավարման խորհուրդներին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

Հանձնարարականների չկատարման կամ մասամբ կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

- 1) **Ծովասարի մ/դ** տնօրենին և կառավարման խորհրդին տրված հանձնարարականները **չեն կատարվել:**
- 2) **Ակունքի մ/դ** կառավարման խորհրդին տրված 5 հանձնարարականներից կատարվել են 2-ը: Մնացած 3-ի կատարման վերաբերյալ **տեղեկատվություն չի ներկայացվել:**
- 3) **Սարուխանի հ. 2 մ/դ** տնօրենին տրված հանձնարարականը **չի կատարվել:**
- 4) **Երանոսի հ. 2 մ/դ** տնօրենին տրված հանձնարարականը **կատարվել է մասամբ:**
- 5) **Ծովագյուղի մ/դ** տնօրենին տրված հանձնարարականը **չի կատարվել:**
- 6) **Կարմիրգյուղի հ. 1 մ/դ** տնօրենին տրված հանձնարարականը **չի կատարվել:**
- 7) **Նորատուսի հ. 1 մ/դ** տնօրենին տրված հանձնարարականը **չի կատարվել:**
- 8) **Վ. Գետաշենի հ. 1 մ/դ** տնօրենին տրված հանձնարարականը **չի կատարվել:**



## 17. Քաղաքացիների՝ կրթության բնագավառին առնչվող առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկումը սահմանված ժամկետներում

Վարչության կրթության բաժինը ուսումնասիրությամբ ընդգրկված ժամանակահատվածում (20.08.2013-23.01.2017), ըստ վարչության ներկայացրած տվյալների, ստացել է դիմում և բողոք՝ ՀՀ ԿԳ նախարարությունից՝ **8**, քաղաքացիներից՝ **152**, այլ կազմակերպություններից՝ **31**:

Ընտրանքային ուսումնասիրությունից պարզվել է, որ դիմումներին սահմանված ժամկետներում տրվել են պատասխաններ:

## 18. «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն դաստիարակ» անվանակարգերին ներկայացված մանկավարժների ընտրության սկզբունքները, հավաստիությունը, թափանցիկությունը

«Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» և «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների մարզային փուլի կազմակերպման և անցկացման գործընթացի փաստաթղթային ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ՀՀ կրթության և գիտության նախարարի 05.12.2013թ. հ. 1354-Ն հրամանով հաստատված՝ «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների անցկացման կարգերի պահանջները պահպանվել են:

### 2014-2016 թվականներին «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների արդյունքները

Ուստարին	Տարվա լավագույն տնօրեն		Տարվա լավագույն ուսուցիչ		Տարվա լավագույն դաստիարակ	
	դպրոցը	ազգանունը, անունը	դպրոցը	ազգանունը, անունը	դպրոցը	ազգանունը, անունը
2013-2014	Երանոսի N2 մ/դ	Սաշա Բավեյան	Սևանի N6 մ/դ	Լուսինե Սարգսյան	Մարտունու թիվ 3 մանկապարտեզ	Հասմիկ Մուշեղյան
2014-2015	Կարմիր-գյուղի N2 մ/դ	Գոհար Ենգոյան	Ճամբարակի N4 մ/դ	Արմենուհի Առաքելյան	Սարուխանի թիվ 1 մանկապարտեզ	Նարա Պողոսյան
2015-2016	Սևանի N3 հ/դ	Լուսինե Հովհաննիսյան	Դրախտիկ գյուղի մ/դ	Արարատ Մովսեսյան	Սևանի թիվ 2 «Ջարթոնք» մսուր-մանկապ.	Նարինե Հարությունյան

## 19. Այլ երկրների, այլ մարզերի (Երևան քաղաքի), տվյալ մարզի դպրոցներից սովորողի ընդունելության և տեղափոխության հաշվառումը

Վարչությունում գործածության մեջ են դրված մարզի, արտերկրի, ՀՀ այլ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ դպրոցներից մարզի դպրոցներ ընդունված/տեղափոխված սովորողների հաշվառման գրանցամատյաններ՝ ըստ տարածաշրջանների:

Ընտրանքային սկզբունքով իրականացված ուսումնասիրությունից պարզվել է, որ դպրոցներ ընդունված կամ տեղափոխված սովորողների տվյալները վարչություն են ներկայացվել սահմանված ժամկետում և հաշվառվել:

Ստորև բերված աղյուսակով ներկայացվում է 2013-2015 թվականներին արտերկրի, ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ դպրոցներից մարզի դպրոցներ ընդունված և տեղափոխված սովորողների թիվը՝

**20. Դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը և ընդգրկումը դպրոցներում (պարտուսից դուրս մնացած երեխաներ, դուրս մնալու պատճառը, ՀՀ ոստիկանության համապատասխան բաժնի տվյալների առկայությունը), համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ**

<b>Ընդունելություն</b>					
Ուստարին	Մարզում	Արտերկրից	ԼՂՀ-ից	Երևանից, այլ մարզերից	ընդամենը
2013-2014	231	111	6	93	<b>441</b>
2014-2015	221	111	7	78	<b>417</b>
2015-2016	226	118	5	77	<b>426</b>
<b>Տեղափոխություն</b>					
Ուստարին	Մարզում	Արտերկիր	ԼՂՀ	Երևան, այլ մարզեր	ընդամենը
2013-2014	469	251	1	119	<b>840</b>
2014-2015	490	272	7	144	<b>913</b>
2015-2016	533	356	3	130	<b>1022</b>

Դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը հիմնականում կատարվել է ՀՀ օրենսդրության պահանջների հիման վրա:

**Դպրոցահասակ երեխաների ընդգրկվածությունը մարզի դպրոցներում.** 2013-2014 ուստարում՝ 30068, 2014-2015 ուստարում՝ 29285, 2015-2016 ուստարում՝ 29132 սովորող:

**Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաներ.** 2013-2015 թվականներին պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաներ չկան:

**ՀՀ Ոստիկանության ԱԳԽ բաժինների կողմից հաշվառված երեխաներ.** 2014թ.՝ 22, 2015թ.՝ 15, 2016թ.՝ 14 անչափահաս: Վերը նշված անչափահասների հետ տարվել են բացատրական և դաստիարակչական աշխատանքներ:

## **21. Դպրոցական տարիքի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառումը, նրանց ընդգրկումը ուսումնական հաստատություններում, երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրումը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառման կարգի պահանջների կատարումը**

Ըստ դպրոցների ներկայացրած տվյալների՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) 170 սովորողներից հոգեբանամանկավարժական եզրակացություն և վկայագիր ունեն 149-ը:

ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման կարգի» համաձայն՝ համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության մարմիններից ստացած տեղեկությունների վերաբերյալ վարչությունը տեղեկատվություն չի ներկայացրել:

## **22. Նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառումը**

Նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառումը կատարվում է համայնքի ղեկավարների կողմից տրված տեղեկատվության հիման վրա:

**2013-2014** ուսումնական տարում մարզում գործել է համայնքային ենթակայության նախադպրոցական 45 ուսումնական հաստատություն (այսուհետ՝ ՆՈՒՀ), որոնցում ընդգրկվել է 3442 երեխա,

**2014-2015** ուսումնական տարում՝ 46 ՆՈՒՀ, ընդգրկվել է՝ 3493 երեխա,

**2015-2016** ուսումնական տարում՝ 46 ՆՈՒՀ, ընդգրկվել է՝ 3422 երեխա:

Մարզի 37 դպրոցում գործում են նախակրթարաններ, որոնցում ընդգրկված է 1043 երեխա:

Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, ուսումնասիրության արդյունքում կազմված տեղեկանքը ուղարկվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետին՝ այն քննարկելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու առաջարկով:

**Վերլուծության և գնահատման բաժին**